

Մարզպետարանի տնօրինության տակ գտնվող տեղեկատվական համակարգերի և օգտագործման կարգի մասին

«Կառավարության գործունեության ծրագրին համապատասխան Լոռու մարզպետի և մարզպետարանի կողմից կատարվող աշխատանքների մասին հասարակայնությանը տեղեկատվություն է ապահովում Լոռու մարզպետարանի աշխատակազմի տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը, որն այդ խնդիրն իրականացնում է մարզպետարանի կայքի, զանգվածային լրատվամիջոցների և «Մարզպետարանի ժամ» հեռուստահաղորդման միջոցով:

Բաժինն իր հիմնական խնդիրներին և նպատակներին համապատասխան՝ կազմակերպում և անց է կացնում մարզպետի և այլ պաշտոնատար անձանց մամուլի ասուլիսներ, հարցազրույցներ, ճեպագրույցներ, հայտարարություններ՝ մարզպետարանի գործունեության ոլորտին առնչվող հասարակական հետաքրքրություն ներկայացնող թեմաների վերաբերյալ, պատրաստում է մամուլի հաղորդագրություններ, օրվա մամուլի տեսությունը, պատրաստում և տարածում է մամուլի հաղորդագրություններ, իր իրավասությունների շրջանակներում հանդես է գալիս պարզաբանումներով ու հայտարարություններով, ծանուցում է մարզպետին և այլ պաշտոնատար անձանց՝ զանգվածային լրատվության միջոցներում տեղ գտած կարևոր նյութերի մասին և անհրաժեշտության դեպքում ապահովում դրանց օպերատիվ արձագանքը, ներկայացնում է առաջարկություններ զանգվածային լրատվության միջոցներով ելույթներում, մշտական թեմատիկ խորագրերում, հեռուստառադիոհաղորդումներում մարզպետարանի պաշտոնատար անձանց մասնակցության վերաբերյալ և ապահովում է դրանց կատարումը: Կազմակերպում է աշխատանքային հանդիպումներ զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների հետ, այդ թվում՝ մարզպետի և այլ պաշտոնատար անձանց մասնակցությամբ, մարզպետարանի գործունեության պատշաճ լուսաբանման կազմակերպման նպատակով մարզպետարանի մյուս ստորաբաժանումներից ստանում է անհրաժեշտ տեղեկություններ և նյութեր, այդ թվում՝ մշակվող իրավական ակտերի նախագծերի պատճենները և անհրաժեշտության դեպքում, կազմակերպում է դրանց լուսաբանումն ու հանրային քննարկումը, ամփոփում և վերլուծում է մարզպետարանի գործունեության ոլորտին առնչվող զանգվածային լրատվության միջոցների նյութերը, մասնակցում է մարզպետարանում անցկացվող նիստերին, խորհրդակցություններին, քննարկումներին, բանակցություններին, պաշտոնական և աշխատանքային այլ միջոցառումներին և ապահովում է դրանց հրապարակայնությունը, ստեղծում է վերլուծական և այլ նյութերի համակարգված արխիվ, տեխնիկական հնարավորությունների առկայության դեպքում՝ պատրաստում է հեռուստաֆիլմեր, տեսանյութեր, թողարկում տեղեկագրեր, իրականացնում է մարզպետարանի ինտերնետային էջի տեղեկատվական սպասարկումը, սահմանված կարգով կազմակերպում և անցկացնում է մարզպետարանում լրագրողների հավատարմագրումը, օրենքով սահմանված կարգով հասարակությանը տեղեկացնում է

քաղաքացիների դիմումների, բողոքների, առաջարկությունների վերաբերյալ մարզպետարանի աշխատակազմի համապատասխան ստորաբաժանումների կողմից մշակված արդյունքների մասին, իր առջև դրված խնդիրները պատշաճ իրականացնելու համար համագործակցում է այլ մարզպետարանների և պետական մարմինների համապատասխան ստորաբաժանումների հետ, իրականացնում է օրենքներով և այլ իրավական ակտերով իրեն վերապահված այլ գործառույթներ:

«Մարզպետարանի ժամ» հեռուստահաղորդումը հեռարձակվում է յուրաքանչյուր երկուշաբթի (կրկնօրյունը երեքշաբթի) մարզային «Ֆորտունա», Ալավերդու «Անկյուն +3» Վանաձորի «Միգ» հեռուստաստուդիաների եթերներով: Տեսահաղորդման մեջ, լրագրական տարբեր ժանրերով լայնորեն լուսաբանվում է մարզպետի և մարզպետարանի գործունեությունը՝ նախորդ շաբաթվա ընթացքում:

Բաժնում առկա է հեռախոսակապ (0322)2-04-13 հեռախոսահամարով, ինտերնետ կապ, երեք համակարգիչ, պատճենահանման սարք, որոնց միջոցով աշխատանքներն առավել արդյունավետ են կազմակերպվում: Բաժինը տրամադրում է նաև անհրաժեշտ տեղեկություններ մարզում գործող հասարակական, կրոնական կազմակերպությունների, ազգային փոքրամասնությունների վերաբերյալ: Լոռու մարզպետարանի Տեղեկատվության և հասարակայնության հետ կապերի բաժինը ապահովում է «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքով սահմանված գործառույթների ամբողջական իրագործումը և մարզպետարանի տնօրինման տակ գտնվող տեղեկատվությունների մատչելի մատուցումը:

Մամուլի ասուլիսները, ճեպագրույցները, շնորհանդեսները հաշվետվությունների ներկայացումը, սեմինարները, կլոր սեղանները և հանդիպում-քննարկումները հիմնականում իրականացվում են Լոռու մարզպետարանի խորհրդակցությունների դահլիճում, արտագնա դեպքերում՝ համապատասխան վայրերից:

Հավելված.

ՀՀ Լոռու մարզպետի

2011թ. նոյեմբերի 9-ի

թիվ 373-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՒՈՒ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆՈՒՄ

ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ

Լրագրողի հավատարմագրումն իրականացվում է «Ձանգվածային լրատվության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքին և սույն կարգին համապատասխան: Հավատարմագրված լրագրողի գործունեությունը Մարզպետարանի տարածքում կանոնակարգվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ և սույն կարգով խոսքի ազատության ապահովման՝ միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին համապատասխան:

3. Մարզպետարանը՝

1) որևէ ձևով կամ որևէ եղանակով չի իրականացնում հավատարմագրված լրագրողի մասնագիտական գործունեության գրաքննություն.

2) հավատարմագրված բոլոր լրագրողների համար ապահովում է ոչ խտրական պայմաններ.

3) լրագրողների համար նախատեսված տեղեկատվությունը հավատարմագրված բոլոր լրագրողներին տրամադրում է միաժամանակ.

4) հավատարմագրված բոլոր լրագրողներին հնարավորինս շուտ տեղեկացնում է Մարզպետարանի այն միջոցառումների ժամանակի և անցկացման վայրի մասին, որոնք կազմակերպվում են լրագրողների համար կամ նախատեսված է լրագրողների մասնակցությունը միջոցառումներին (այսուհետ՝ Մարզպետարանի միջոցառումներ):

Տեղեկատվությունը լրագրողին փոխանցելու պատշաճ ձև է համարվում էլեկտրոնային փոստով հաղորդումը: Լրագրողի էլեկտրոնային հասցեի բացակայության դեպքում Մարզպետարանը միջոցներ է ձեռնարկում տեղեկատվությունն այլ միջոցներով փոխանցելու համար: